| | |
|---|---|
| Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը) | **ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԱՆԱԼԻՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (7.20ՃՏՊ009)** |
| ECTS կրեդիտ | 2 կրեդիտ |
| Ուսումնառության վերջնարդյունքներ | Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>*(գիտելիք և իմացություն)*<br>• ճանաչել կառույցը և վերլուծել ճարտարապետական ստեղծագործությունը, ըստ այդմ՝<br>✓ ներկայացնել կառույցի ժամանակը և այդ ժամանակին համապատասխանող աշխարհընկալումը,<br>✓ բացահայտել պատմական և քաղաքակրթական գործընթացների էությունը,<br>✓ վերլուծել կոնստրուկտիվ և տեկտոնիկ համակարգերը,<br>✓ ներկայացնել համաչափական համակարգը,<br>✓ վեր հանել մետրիկ և ռիթմիկ օրինաչափությունները,<br>✓ կատարել տեսական-գրաֆիկական վերակազմու-թյուններ,<br>• իրականացնել ճարտարապետական կառույցի համեմա-տական վերլուծությունը<br>✓ համեմատել երկու կառույցներ,<br>✓ կազմել զարգացման ժամանակագրական և տիպաբանական աղյուսակներ,<br>✓ կատարել քարտեզագրում,<br><br>*(կարողություններ)*<br>• ցուցաբերել ցանկացած ճարտարապետական կառույցի կամ համալիրի մասնագիտական վերլուծությունն ու ուսումնասիրությունը իրականացնելու հմտություններ,<br>• հավաքել արխիվային նյութերը և կազմել վերլուծության տրամաբանական սխեմա,<br>• ամփոփել ելակետային տվյալներն ու վերլուծության արդյունքները, կազմակերպել դրանց ընդհանրացումը, |

| | |
|---|---|
| | • արդյունքները ներկայացնել ռեֆերատի տեսքով կամ մասնագիտական լեզվով՝ գրաֆիկական կատարմամբ՝ A3 ձևաչափում: |
| Դասընթացի թեմատիկ ծրագիր | • Հիմնական տեղեկություններ առարկայի մասին: <br>• Հուշարձանների վերլուծության մեթոդները: <br>• Ճարտարապետական կառույցի համեմատական վերլուծությունը: <br>• Առանձին ճարտարապետների ստեղծագործության մատենագրական վերլուծության մեթոդի էությունը: <br>• Ճարտարապետական կառույցի ընտրությունը: Վերլուծական աշխատանքի փուլերը: <br>• Կառույցի ճարտարապետական վերլուծության հիմնական մեթոդներ: Հիմնական հասկացություններ: Համակարգային վերլուծություն: Վերլուծության հիմնական մեթոդների մեկտեղում: |
| Դասընթացի գրականության ցանկ | • Կիրակոսյան Լ., Կառույցի ճարտարապետական վերլուծությունը, Ուսումնամեթոդական ձեռնարկ: - Երևան, ԵՃՇՊՀ, 2004թ., 39 էջ: <br>• Մխիթարյան Ն., Թամազյան Վ. Ծավալատարածական հորինվածքի հիմունքներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ: - Երևան, ՃՇՀԱՀ, 2016թ., 67 էջ, ISBN 978-9939-63-275-9: <br>• Глазичев В.Л. Эволюция творчества в архитектуре. Эволюция творчества в архитектуре. - М.: Стройиздат, 1986г. - 494с. <br>• Мусатов А.А, Кочергин В.В и др. Методика архитектурного анализа, Указания по выполнению практической работы по курсу истории архитектуры. - М.: МАРХИ, 2015г. - 56с.: ISBN 9785-91976-077-1. |